«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր՝
_____ Գ. Ս. Խիթարյան
«09» «Նոյեմբերի» 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀԱԿՈԲ ՄՈՒՇԵՂԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ <<ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՑԻԱԼ—ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ>> (ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական կազմի օրինակով) ԺԹ. 00.03 - <<Սոցիալական հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Հակոբ Մուշեղի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունը վերաբերվում է զինված ուժերում ծառայողական գործունեության արդյունավետության ապահովման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնահարցերին:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ռազմական հաջողությունների կարելի է հասնել ոչ միայն ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, այլ նաև կառավարման տարբեր մակարդակներում մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, հոգևոր ու ֆիզիկապես պատրաստված անձնակազմով:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ռազմավարական կարևոր օղակ հանդիսացող տարածաշրջանում և համարվում է հակամարտության մեջ գտնվող երկիր:

Զինված ուժերում ծառայողական գործունեության սոցիալ – հոգեբանական մեխանիզմների ներդրումը հնարավոր է դարձնում գնահատել զինծառայողների իրականացրած մասնագիտական գործունեության արդյունավետությունն ու որակը, ինչն էլ հնարավորություն կտա նաև իրականացնել առաջխաղացման, կատարելագործման արդի հիմնահարցերը: Ակնհայտ է դառնում աշխատանքի նշանակությունը ոչ միայն զինվորական ստորաբաժանումների, այլ նաև ամբողջ երկրի համար, քանի որ բանակը պետության հիմնարար ինստիտուտներից մեկն է, որտեղ զինված ուժերը իրականացնում են երկրի անվտանգության և պաշտպանության խնդիրները:

ՀՀ զինված ուժերում, տարբեր աստիճանի բարդության իրավիճակներում կրտսեր սպայական կազմի գործունեության սոցիալ-հոգեբանական գործընթացների համալիրը, որպես գնահատման հիմնական մեխանիզմների համակարգ ընդունելով, ատենախոսը ներկայացրել է այն հիմնական դրույթները, որոնցով պայմանավորված են զինվորական ծառայողական գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որում հստակ ներկայացված են հետազոտության արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, նպատակը, վարկածը, խնդիրները, օբյեկտը, առարկան, մեթոդները, ընտրակազմը, ընթացքը, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, տեսական և գործնական

նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, երեք գլուխներից՝ երկուսը տեսական, մեկը՝ հետազոտական, տեսական ու փորձարարական ուսումնասիրությունների հիման վրա կատարված եզրակացություններից, գործնական առաջարկներից, հարուստ և համապատասխան գրական աղբյուրների ցանկից (հայերեն, ռուսերեն և անգլերեն 102 աղբյուր) ներառում է ծավալուն հավելված բաժին (41 աղյուսակ), 33 նկար, 8 աղյուսակ: Առանց հավելված բաժնի ատենախոսության ծավալը կազմում է 281 համակարգչային էջ:

Ատենախոսության առաջին գլխում՝ <<Անձի մասնագիտական գործունեության հիմնախնդիրները>> յուրովի ձևաչափով ու թեմային բնորոշ մոտեցման դրսևորմամբ ներկայացված են գործունեության երեք առանձնահատուկ կողմերը՝ ա) գործունեությունը որպես անձի ինքնարտահայտման միջոց, բ) գործունեության տեսակների դասակարգումն ու բնութագրերը, գ) մասնագիտական գործունեության առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ ատենախոսը հիմնովին մանրամասնել ու վերլուծել է գործունեության հոգեբանությունը, հայ, ռուս և օտարազգի նշանավոր հոգեբանների հայեցակետերն ու գաղափարները, առավելապես ուղղորդելով արտակարգ իրավիճակների, այդ թվում զինվորական ծառայության ոլորտներին:

Ատենախոսության երկրորդ՝ <<Ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորով սոցիալ-հոգեբանական գործոնները>> գլխում լուսաբանված է հետևյալ դրույթները"

1. <<Ծառայողական գործունեության բնութագիրը>> ենթագլխում, նկարագրված են Հայաստանի և Եվրոպական պետությունների զինված ուժերի ծառայողական գործունեության բնութագրերը:
2. <<Ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների տեսական հիմքերը>> ենթագլխում լուսաբանվել և դասակարգվել են ծառայության գործունեության արդյունավետության սոցիալ-հոգեբանական գործոնները:
3. <<Զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգը զինվորական գործունեության արդյունավետության համատեքստում>> ենթագլխում մեկնաբանվել են զինվորական ծառայության անվտանգության ապահովման համակարգում ՀՀ զինված ուժերի կրտսեր սպայական կազմի ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները, հստակեցվել են հոգեբանական, տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության ապահովման գործոնների ազդեցությունը մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի վրա:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ ԶՈՒ կրտսեր սպայական կազմի ծառայողական գործունեության արդյունավետության սոցիալ-հոգեբանական մեխանիզմների հետազոտություն» խորագրով գլուխը ներկայացնում է հետազոտության մեթոդների ընտրության հիմնավորումը, ընտրանքի կազմելն ու բաշխումը, հետազոտության իրականացման տրամաբանությունն ու ռազմավարությունը, տարբեր փուլերում ներգրավված համակազմի քանակական ցուցանիշները, դրանց հոգեբանական որակական և քանակական վերլուծությունը, արդյունքների համահարաբերակցման կապերի վերլուծություններն ու նկարագրերը: Մանրազննին կերպով ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված հարցման, թեստային,

մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, դրանց էությունն ու անցկացման ընթացակարգը:

Մեկնաբանվել ու հիմնավորվել են ծառայողական տարբեր բարդության և պայմաններում գործունեության արդյունավետության մակարդակների (<< Բարձր>>, <<միջին>> և <<ցածր>>) ձևավորման հիմքում ընկած անձնային հատկությունների ու մեխանիզմների առանձնահատկությունները, առանձին գործոնների փոխկապակցվածության համահարաբերակցական կապերի աստիճաններն ու բնութագրերը:

Առանձնակի տեղ են գրավում «Ծառայողների գործունեության արդյունավետության ձևավորման համահարաբերակցական կապերի հոգեբանական վերլուծություն» բաժնում ներկայացված հաջորդական փուլերի տվյալներն ու դրանց մեկնաբանությունը: Մշակվել են ՀՈՒ-ում կրտսեր սպայական կազմի ծառայողական գործունեության արդյունավետության տարբեր մակարդակների ձևավորման բնութագրերը ըստ հեղինակի կողմից առաջադրված գնահատման չափորոշիչների և առաջարկվել է գնահատման մեխանիզմներ:

Ըստ ատենախոսի եզրահանգման ծառայողական գործունեության արդյունավետությունը ստուգվում է գնահատման սոցիալ –հոգեբանական մեխանիզմների համակարգով, որոնց ձևավորման հիմքում ընկած են բարոյական, հոգեբանական , տեղեկատվական և ֆիզիկական անվտանգության խնդիրները: Գնահատման համակարգը թույլ է տալիս դուրս բերելու նաև ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական բնութագրերի համակարգը:

Թեկնածուական ատենախոսության և սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ ԳՈՀ-ի թվանիշին՝ ԺԹ.00.03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին: Ծավալուն և աշխատարար տեսական ու էմպիրիկ երկարամյա հետազոտությունների արդյունքներով ատենախոսը կարողացել է լուծել իր կողմից առաջադրված նպատակն ու խնդիրները:

Որպես հետազոտական աշխատանք ատենախոսության մեջ առկա են որոշ թերություններ և բացթողումներ որոնք չեն նվազեցնում ներկայացված աշխատանքի գիտագործնական ու տեսամեթոդական արժեքները:

Դրանց թվին են դասվում՝

1. Տեխնիկական բնույթի թերություններն ու վրիպակները՝

   Ատենախոսը ծավալուն և բազմագործուն հետազոտության արդյունքները ենթարկելով համահարաբերակցական կապերի վերլուծության ու բնութագրման, ինչը շատ արժևորում է ախատանքի գիտական հիմնավորումը, սակայն մակերեսորեն է անդրադարձել երկու տարբեր զինվորական ծառայություն իրականացնող զորամասերի սպաների հետազոտական արդյունքների «Կոռելյացիոն պլեադա» -ների վերլուծությանն ու նկարագրերին: Թեպետ առկա են աշխատանքում ծավալուն և հարուստ հավելվածներ, որ պարունակում են դրանց վերաբերյալ կապերի արժեքները և համապատասխան ցուցանիշներ, սակայն աշխատանքի տվյալ բաժնում չեն ներկայացված՝

   ա/ որն է կապի ,,R,,-ի, ,,P,,-ի մեծությունն ու հավաստիության աստիճանը /էջ 101 և 103/,

   բ/ ինչպիսին է տվյալ կապի բնույթը /,,+,, ,,-,,/,

գ/ առանձին գործոնների կապերի քանակությունը, որքանով է արժևորում նրա դիրքն ու դերը տվյալ «պլեադայում»

դ/ միգուցե ըստ տեղերի գործոնները դասակարգվեին ելնելով կապերի քանակից ու հավաստիության աստիճանից: Օրինակ նկ" 23-ում /էջ 103/ ,,Ինքնակառավարումը կլիներ առաջին տեղում և նույն սկզբունքով մնացածը, կամ ներկայացվեր նույնը կից աղյուսակով: Միայն առկա են բազմիցս հղումներ /տես նկար 22 կամ 23/, չկա հղում որևէ աղյուսակի հանդեպ:

ե/ հարուստ և ակնառու տարբերություն կա երկու «պլեադաների» միջև /գործոնների քանակի, դրանց կապերի բնույթի, մեծության և հավաստիության աստիճանի, գրված դիրքի և այլն/, ինչը չի նկատել ատենախոսը:

զ/ ինչի հիման վրա է ատենախոսը կապերը անվանակոչել ,,Առավել ամուր,, ,,ուղիղ,, ,,հակադարձ,, փոխկապակցություններ /կարելի էր նշել դրանց բացատրությունը/

է/ նկարներ 24-ից 33-ը անվանումներ չունեն, վերլուծություններ ներկայացված են նույն %-ների վերարտադրությամբ, ինչը ներկայացված է նշված նկարներում, կրկնելով ,,ցածր,, ,,միջին,, և ,,բարձր,, ցուցանիշներ դրսևորած գործոնների %-ին հարաբերությունները, երբեմն է այն անվանելով ,,ամենաուժեղ դրսևորում,, անվանումով /էջ 106-117, նկարների բացատրություն/: Բացակայում են թե ինչի մասին են այդ %-ների հարաբերակցությունները, վկայում /տես նկ" 29,30,31,32,33/

2" Առանձին հեղինակների /այդ թվում նշանավոր հոգեբաններ, ֆիզիոլոգներ/ վերաբերյալ կան հղումներ, մեջբերումներ կամ հայցքներ, սակայն գրական աղբյուրների ցանկից դուրս են մնացել /Անան և Բ.Գ., Լոմով Բ.Ն. , Կուզմին Կ.Ժ., Անոխին Բ.Ֆ., Կարայան, Մասլոու Ա., Ադլեր Ա./ որոնք ներկայցված են ,,հետազոտության մեթոդաբանական հիմքը,, բաժնում /էջ 11,12/, Լուրիա Ա.Ռ., Բրուղլինսկի Ա.Բ., Ուզնաձե Դ.Ն., Սեջենով Դ.Մ. /էջ 17,21,22,104/:

3. Հետազոտված գործոնների շարքում մեծ տեղ են գրավում անձնային գործոնները, իսկ սոցիալ-հոգեբանական տեսակետից դրանց դրսևորման գործունեության արդյունավետության առումով գրեթե աննշան է արտացոլված քանզի չկա արևէ կապ գործունեության արդյունավետության, որևէ ցուցանիշի հետ /դրդապատճառ, պահանջմունք, հավակնությունների մակարդակ, հեռանկար և այլն կամ գործնական կիրառական որևէ գործառույթ:

4" Եզրակացությունները առավել հիմնավոր կինչեին, եթե փաստարկվեին առանձին հետազոտական հավաստի հարաբերակցական կապերի կամ ցուցանիշների հղումներով, գործունեության առանձին ծառայողական գործառույթների արդյունավետության օրինակով, այլ ոչ միայն ըստ առանձին հոգեբանական ցուցանիշների միջև կապերի նկարագրերով:

5" Աշխատանքը իր ծավալով ու կատարման տեխնոլագիաներով մեծ է ու բազմաբովանդակ: Այն կարելի էր հնարավորինս ազատել առանձին նյութերից: Առանձին նկարներ որտեղ չկան ակնառու, կարևոր ցուցանիշներ ու դրանց դերակատարումներ, համահարաբերակցական հավաստի կապեր և այլն ,,զտել,,: Անգամ դրան կօգներ նաև եթե հեղինակն իրականացներ գործոնային /ֆակտուրային/ վերլուծություն ու դասակարգեր ծառայության գործունեության արդյունավետության հիմնական սոցիալ-հոգեբանական գործոններն ու մեխանիզմները, ինչն էլ հանդիսանում է աշխատանքի առանձին խնդիրներից մեկը:

Նշված անճշտություններն ու թերությունները չեն նսեմացնում գիտական հետազոտական արժեքը, դրանք կարելի է ընդունել որպես ցանկություններ և առաջարկներ:

Այնուամենայնիվ Հակոբ Մուշեղի Գևորգյանի ատենախոսական աշխատանքն ավարտուն հետազոտական գիտագործնական և տեսամեթոդական ուսումնասիրություն է, որի արդյունքում կատարված են արժեքավոր տեսական ու գործնական եզրակացություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Մուշեղի Գևորգյանի «Զինված ուժերում ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները» /ՀՀՀՈՒ կրտսեր սպայական կազմի օրինակով/ թեմայով «Սոցիալ հոգեբանություն» /ԺԹ.00.03/ մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը իրենից ներկայացնում է հիմնարար տեսական, գիտագործնական հետազոտության և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Հակոբ Մուշեղի Գևորգյանը արժանի է հոգեբանական գիտությունների գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 25.10.2023թ նիստում (արձանագրություն թիվ 4), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ., դոցենտ Թ. Յու. Ազատյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Ա.Ա. Գյորգյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտի
Ա. Լալայանի անվ. Սպորտի
մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր **Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., պրոֆեսոր
Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտի
գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**

«09» «Նոյեմբերի» 2023թ